

ԼՈՒՐԵՐ, ԹԵՐԹԵՐՈՒ ԱԶԴ, ՆԱՄԱԿԱՆԻ

ԱՄՍԱԼՈՒՐԻՔ

— — —

1. Համոյցով կը կարգանք, «Վեհափառ կայսրն Ա. կարգի (Սմանիէ պատուանշան շնորհեց Կ. — Պատրիարք Տ. Սապպաղեան Սրբազանին» : Իմբագրութիւնս այս առթիւ իր ուրախակցութիւնները կը յայտնէ Գրեթը Չեքոսլովակիայէն : 2. Սապպաղեան Նոգեւոր-Տէրը Հոռո՛ մեկնած է. երկու երեք ամիս բացակայ պիտի մնայ Կ. Պոլսէն. այդ միջոցին՝ կաթողիկոսարանի գործերը Գերբ. Սահակ Հաճեան Արքեպիսկոպոսը պիտի կարգադրէ :

3. Շատ ատենէ ի վեր կողկասի ազգայիններէն ոչ լուր, ոչ իրազիր և ոչ Հանդէս կ'ընդունինք :

4. Եզրկատոսի Հայ-Հոռոմական հասարակութիւնը, ինչպէս հրատարակեցին տեղոյն թէ՛ պաշտօնական և թէ՛ հայ լրագրութ' տասնամաս է Տէրութիւնէն եկեղեցական կանոնադրութեան հաստատութիւնը : Կնիդեան տունին օրը՝ Արժ. Յովհաննէս վ. Ալթունեան՝ ի ներկայութեան Վ. Կեմ. Էսաբազ Արթիւն փայլայի, Յովհաննէս Պէյ Մաթոնեանի, Բիւզանդ Է. Մարաքի, փաստաբան յան Պրոտանի և ուրիշներու՝ ծանուցած է Երեսփոխանական ժողովի կազմութեան ծրագիրը : Արժ. Հայրը շարք մը խանդավառ բառերով շնորհատրեց այս նոր դրութեան նախաձեռնարկ եղողները, փափագ յայտնելով որ ներկայներէն ամէն որ պատրաստ ըլլայ ընելու ինչ որ իրենմէ պահանջուի :

«Բիւզանդ Է. Մարաքի, ձայնակից եղաւ Արժ. Ալթունեան Տօր մաթմատիկն, և ըստ որ նոր Երեսփոխանական ժողովը այն ատեն միայն պիտի կրնար իր լիութի օգտակարութիւնն ունենալ՝ երբ ամէն անհատ ընտրելի թէ՛ ընտրող իր պարտականութիւնը կատարէ» :

«Նոր Երեսփոխանական ժողովին համար՝ առաջին գումարումը տեղի պիտի ունենայ առաջիկայ Յունուար 18ին, ընտրութիւնները կատարելու համար» : Լուսաբեր, թիւ 163 :

5. Այսօր 16 Յունուարի առաջին անգամ կը ընտրեն կողկասէն «Մշակ» ի 229—246, թիւները : «Մշակ» ի իմբագրութիւնը 229 թիւով իր ծաւալը կը մեծցնէ :

Եւ «Մշակ» յայ վերջին թիւերով մանրամասն կու գայ պատմելու իր ժողովրդին ողբալի կացութիւնը : Կը մտղայնէ «Մշակ»ին աւելի փառապանծ ապագայ :

6. Վերոյիշեալ օրագիրը, կը ծանուցանէ նոր հրատարակուելիք «Կառա՛» օրաթերթի մը ծանուցագիրը : Գրագէտներն նշանակուած իբրև անդամ խմբագրութեան : Օրաթերթը որ դեկտեմբերի վերջերը լոյս պիտի տեսնէ՝ «Նաւարակական», քաղաքական և գրական» է. խմբ. Ա. Սահակեան Հրատարակիչ — Մ.

Նալբանդեան. Տարեկան Արտասահմանի համար 32 ֆր. Հասցէն՝ Tiflis (Russie) Rédaction «HARADJ». այս թերթիս ալ՝ մեր շնորհաւորութիւնները :

7. Մշակի թ. 231 «Հայ-կաթողիկոսների դրութիւնը կողկասէն» ի յօդուածագիրը նկատողութեան կ'առնու այդ համայնքին վիճակը : Կողկասի այդ համայնքը «որ բաւականին խոշոր թիւ է կազմում», 1830 թուականին 5. Եփրեմ Սեթեան Միտիթարեան վարդ. ի առաջնորդութեամբ ի Ռուսաստան գաղթել է կարնէն. 1840ին Տէրութիւնը իբրև պաշտօնապէս առանձին հասարակութիւն մը չի ճանչնար գիրեքը. Տիրուպոլի լատին եպիսկոպոսին իրաւասութեան կ'ենթարկէ կաթողիկ հոգեւորականութիւնը :

8. Արքեպիսկոպ վ. Արարատեանի բողոքը «ինչպէս երևաց, ցանկալի հետեւանք ունեցաւ. 1893 թ. մայիս 14ին՝ Բարձրագոյն հրովարտակով հայ-կաթողիկ հոգեւորականութեանը շնորհից ինքնավարութիւն-առանձին վարչութիւն և կառավարութիւն և որոշ իրաւունքներ՝ հոգեւոր պարոքներ բանալու վերաբերմամբ» : — Սակայն յիշեալ հրովարտակը մինչեւ օրս՝ թղթի վրայ միայն կը մնայ :

«Հայ կաթողիկ համայնքը, թեմական լատին եպիսկոպոսի աթոռի հետու լինելու պատճառով մնացել էր զուրկ նրա հայեացքից, զրկվել, թէ՛ կրօնական, թէ՛ բարոյական բարեկամութիւնից ու ճշմել լատինների ծիսակատարութիւնները համակողկոցից» : Այդ պարագաներով «հայ-կաթողիկութիւնը ինքնանախապետեան եկաւ . . . և միանալով հոգեւորականութեան հետ, ընտրեց պատգամաւորներ, որոնք ներկայ տարւայ (1905ին) յունիս ամսին ներկայացան Ղորին պայծառափայլութեան փոխարքայ կոմս Վ. օթուցով-Գաշգովին, և խնդրեցին՝ որ 1893 թ. մայիսի 14ին հրատարակված Բարձրագոյն հրովարտակը իրական հողի վրա դրվի, գործադրվի : փոխարքան ընր՝ ընդունելութիւն ցոյց տալով՝ խոստացաւ բարարութիւն տալ նրանց խնդրին» : — Սակայն մինչև հիմայ լատին եպիսկոպոսին կողմանէ եղած ատարկութիւնը ակակ կը թողուն ինդիրը :

8. Մեծ. Բիւրաս Զէրազ, որ 18 տարիէ ի վեր կը խմբագրէր L'Arménie, և 40 տարի ազգ. գործունէութեան մէջ էր գտնուել, դառնացած իր այնքան արդեանց գտած վարձատրուութենէն, տօքո. Յովհաննէս Լօրիս-Մէլիքոֆի հետ ունեցած միջադէպէն յետոյ (մենամարտի խնդիր, L'Arménie որ քանի բացառութիւններէն ծագած) որոշած է դադարեցնել իւր թերթը՝ որ գոհողութեանց պատճառ եղած էր իրեն Արիսի աշխատակցի այտուհետեւ և Revue Latimo-Stave թերթին :

Եւրոպացին այսու կը կորսնցնէ L'Arménie մը, որով նա կրնար ճանչնալ Հայը :